ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻՑ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Ժողովին մասնակցում էին 39 մարդ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավարը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2014 թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2014 թ. առաջին կիսամյակում բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, նշելով,որ այդ աշխատանքը շարունակական է: ն եկամուտների հավաքագրման ընթացքում՝ հիմնական շեշտը դրվում է սեփական եկամուտների հավաքագրման վրա: Մասնավորապես նշվեց, որ 2014 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարողականը եկամուտների գծով կազմում է 99.2 %, որից սեփական եկամուտների կատարողականը՝ 94.9 %:

Այն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում.

/2014 թվականի առաջին կիսամյակ /

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՆԱԽԱՏԵՍՎԱԾ հազ. դրամ	ՓԱՍՏԱՑԻ հազ. դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	26735.0	26534.3	99.2
ՈՐԻՑ՝ ՍԵՓԱԿԱՆ	3960.0	3759.3	94.9
ԱՅԴ ԹՎՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿ	1300.0	1354.1	104.2
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	2450.0	2291.3	93.5
ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ	50.0	32.1	64.2
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	160.0	81.8	54.1
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	------	-----	------

Այնուհետև համայնքի ղեկավարը հակիրճ կերպով անդրադարձավ 2014 թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացված հիմնական աշխատանքներին, այն է՝

1. Ճաղավանդակների տեղադրում «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

շենքի պատուհանների և դռների վրա:

2. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում կազմակերպված տարատեսակ միջոցառումներին: Կանանց միամսյակի առթիվ նվիրատվություն գյուղապետարանի, <<Նորակերտի մանկապարտեզ>> Հոակ-ի և բուժ ամբուլատորիայի աշխատակիցներին:

3. Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի սակավ ապահովված ընտանիքներին:

4.Համայնքի ազգաբնակչության մի մասին՝ Կոմիտաս և Թումանյան փողոցների մի հատված,ոռոգման ջուր մատակարարող ջրագծի մետաղյա խողովակների փոխարինում նորով:

Ի ուրախություն համայնքի բնակիչների ուղում եմ նշել,որ <<Ասիական զարգացման բանկի>> ծրագրի շրջանակներում ավարտին է հասցվել համայնքի խմելու ջրագծերի հիմնանորոգման աշխատանքները,որը հնարավորություն կտա լուծել գյուղի ազգաբնակչությանը խմելու ջրով շուրջօրյա մատակարարման խնդիրը:

Այնուհետև համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը նշեց, որ համայնքում դեռևս առկա են շատ չլուծված հիմնախնդիրներ, որոնց լուծման համար դրամական մեծ ներդրումներ են պահանջվում, որը համայնքը ի զորու չի լուծելու իր համեստ միջոցներով, այն է՝

ա/ հիմնական վերանորոգման են ենթակա մանկապարտեզի և մշակույթի տան շենքերը:Համայնքը պատրաստ է համաֆինանսավորման միջոցով օժանդակելու մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքներին,որը ընթացքի մեջ էր՝ բայց կարծես թե ձգձգվում է ինչ ինչ պատճառներով:

բ/Լուրջ խնդիր է դպրոցի մարզադահլիճի բացակայությունը:

Խմելու ջրագծերի անցկացումից հետո առաջնահերթ խնդիր է դարձել գյուղամիջյան փողոցների բարեկարգումը:

Հրատապ է նաև փողոցային լուսավորության անցկացումը, համայնքի գլխավոր հատակագծի պատվիրումը,որին առաջիկայում ձգտում ենք ինչ որ ձևով լուծում տալ:

Անհասկանալի պատճառներով ձգձգվում է <<խոպան>> կոչվող հատվածի ոռոգման ջրագծի ծրագրի իրականացումը,որը մտցված էր միջազգային բանկի կողմից իրականացվող ծրագրերի մեջ:

Համայնքի ղեկավարը միաժամանակ նշեց, որ խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ համայնքում տարեցտարի մեծանում է չմշակվող գյուղատնտեսական հողերի տեսակարար կշիռը, որը ներկայումս կազմում է շուրջ 85%, որի պատճառներից է հողերի ցածր բերրիությունը, ոռոգման ցանցի անբարեկարգ վիճակը և այլն:

Ելույթ ունենալով համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Քոշյանը, մանկապարտեզի տնօրեն Ս.Ասատրյանը, Նորակերտի բուժ ամբուլատորիայի տնօրեն Հ. Աղախանյանը և մյուսները, առանձնակի շեշտեցին այն ուշադիր վերաբերմունքը որը դրսևորվում է համայնքի ղեկավարի կողմից իրենց հիմնարկներում կազմակերպված բոլոր միջոցառումների հանդեպ:

Համայնքի ղեկավարը վերջում հավաստիացրեց, որ չնայած առկա դժվարություններին ամեն ինչ կարվի հնարավորին չափով լուծելու համայնքի առջև ծառացած խնդիրները:

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ